«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ.65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացի հետազոտական աշխատանք

Առարկա – ՆԶՊ և ԱԿ

Մասնակից – Մեսրոպյան Հրաչիկ

Ղեկավար – փոխգնդապետ Ա. Իսահակյան

Թեմա – Զինղեկների համագործակցությունը շեֆ զորամասերի հետ:

Երևան – 2023թ.

Բովանդակություն

Ներածություն……3
ԳԼՈՒԽ 1. Զինղեկների ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԵՖ- ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՀԵՏ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
1.1 Զինղեկների մասնագիտական գործունեության դերը ուսումնական գործընթացում……5
1.2Շեֆ-զորամասի հետ զինղեկների համագործակցության առանձնահատկությունները……11
Եզրակացություններ և առաջարկություններ……17
Օգտագործված գրականության ցանկ……19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրը և ռազմական գիտելիքների յուրացման արդյունավետությունը ժամանակի մարտահարավերներին զուգընթաց ավելի մեծ ուշադրության է արժանանում: ՀՈՒ արդի խնդիրների, Հայոց բանակի առանձնահատկությունների, ժամանակակից զենքի և ռազմական զրահատեխնիկայի, կանոնադրությունների և սովորությունների մասին նախնական գիտելիքները ապագա զինվորները ստանում են դպրոցական ուսուցման ընթացքում՝ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի շրջանակներում: Վերոնշյալի հաջողությունը կախված է զինղեկի մասնագիտական հմտություններից, նրա՝ դասը հմտորեն կազմակերպելու և արդյունավետորեն վարելու ունակությունից: Ռազմահայրենասիրական դաստիարակությունը աճող սերնդի գաղափարական դաստիարակության կարևորագույն կողմերից մեկն է հանդիսանում: Այս դաստիարակության կարևորությունը ներկայիս ժամանակաշրջանում պայմանավորված է ռազմական ագրեսիայի և սպառնալիքների ուժեղացմամբ և երկրի պաշտպանունակության հետագա ամրապնդման անհրաժեշտությամբ, ազգային բանակի մարտական պատրաստության, անձնակազմի ֆիզիկական և մասնագիտական ունակությունների բարձրացմամբ, որը կհամապատասխանի ժամանակի պահանջներին:

Այստեղ կարևոր դեր ունեն զինղեկները, ովքեր պետք է կարողանան հմուտ և արդյունավետորեն կազմակերպել ուսուցման գործընթացը: Այս ամենի հետ կապված՝ աճում է զինղեկների մասնագիտական պատրաստվածության, կիրառական հմտությունների և կարողությունների զարգացման նշանակությունը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ հաշվի առնելով ժամանակակից ռազմագիտության մեջ առկա նորամուծություններն ու զարգացումները, ինչպես նաև տարածաշրջանի

անկայուն խաղաղության հեռանկարները, կարևորվում է ԶՈՒ բոլոր կառուցվածքների գործունեության կատարելագործումը, այդ թվում նաև դպրոցներում զինղեկների մասնագիտական որակների արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ինչն իր հերթին ապագա զինվորի արդյունավետ և հաջող զինվորական ծառայության հիմքն է հանդիսանում: Հետազոտության նպատակը:

Հետազոտության նպատակն է վերլուծել զինղեկների մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման առանձնահատկությունները՝ շեֆ-զորամասի հետ համագործակցության շրջանակներում, ուսումնասիրել զինղեկների մասնագիտական գործունեության սկզբունքները, նպատակները, զարգացման մեթոդները: Հետազոտության խնդիրներն են.

- ուսումնասիրել ՆԶՊ առարկայի դասավանդման ընդհանուր դրույթները,
- վերլուծել ՆԶՊ դասավանդող զինղեկների մասնագիտական գործունեության առանձնահատկությունները,
- ուսումնասիրել զինղեկների մասնագիտական գործունեության արդյունավետության գործոնները,
- վերլուծել շեֆ-զորամասերի և զինղեկների միջև համագործակցության առանձնահատկությունները և ազդեցությունը վերջիններիս մասնագիտական գործունեության վրա:

ԳԼՈՒԽ 1. ԶԻՆՂԵԿՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԵՖ-ԶՈՐԱՄԱՍԻ ՀԵՏ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

1.1 Զինղեկների մասնագիտական գործունեության դերը ուսումնական գործընթացում

«Ամեն ինչ կարող է հայրենի հողը. և՛ խմեցնել իր լուսավոր աղբյուրներից, և՛ կերակրել իր հացով, և՛ զարմացնել ծաղկող այգիների գեղեցկությամբ: Միայն մեկ բան կա, որ այնչի կարող՝ պաշտպանել ինքն իրեն, և դա պետք է անի նա, ով խմում է նրա ջուրը, ուտում նրա հացը և հիանում նրա գեղեցկությամբ»: Ա. Վ. Սուվորով

Հայաստանի Հանրապետության շուրջ ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունը ձևավորվում է ստրատեգիական և աշխարհաքաղաքական բարդ միջավայրում, որն աչքի է ընկնում մի շարք անկանխատեսելի գործոնների ազդեցությամբ: Հաշվի առնելով տարածաշրջանի ռազմական անկայուն վիճակը՝ այսօր, առավել քան երբևէ, անհրաժեշտ է դպրոցներում ունենալ հմուտ և կայուն գիտելիքներով զինղեկ-ուսուցիչներ, որոնք կկրթեն և, դրանով իսկ, կնպաստեն բանիմաց սերունդ ունենալուն: ՀՀ-ի համար աշակերտների և երիտասարդների շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակությունը կարևորագույն հիմնախնդիրներից մեկն է: Այն սերտորեն կապված է նախնական զինվորական պատրաստվածության հետ և պետք է նպաստի պատանիների մոտ ռազմական գործի ավելի լավ յուրացմանը և տիրապետմանը : ՆԶՊ առարկան իրականացվում է աշակերտների կողմից պետության պաշտպանության հիմունքների յուրացման նպատակով, ինչպես նաև ՀՀ ԶՈՒ առանձնահատկությունների, դրա բնույթի, զինվորական ծառայության՝ որպես քաղաքացիական պարտքի նշանակության, ռազմական կանոնադրության իմացության, զորամասի ռազմական, զինվորական տեխնիկային ծանոթության նպատակով: Բացի վերոնշյալը, ՆԶՊ առարկան ուղղված է ռազմական գիտելիքների և հմտությունների ձեռքբերմանը, ինչպես նաև

արտակարգ իրավիճակներում մարդու կյանքի անվտանգության հիմունքների յուրացմանը: Ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնական խնդիրը կայանում է նրանում, որպեսզի երիտասարդների մոտ ձևավորի սեփական ազգին հավատարիմ լինելու գաղափարական համոզմունք, նրանց մեջ սերմանի հայրենասիրական ոգի, սեփական հայրենիքը քաջաբար պաշտպանելու և զենքը ձեռքին կռվելու մշտական պատրաստակամություն, քաղաքացիական պարտքը բարեխղճորեն կատարելու ցանկություն: Զինղեկը ՀՀ ԶՈՒ սպա է, կրում է ուսադիրներ և համազգեստ, ով ծավալում է նաև ուսումնական գործունեություն և դրա շրջանակներում իրականացնում մի շարք գործառույթներ: Նրա մասնագիտական գործունեության հիմնական ուղղվածություններն են.

- ռազմահայրենասիրական ուղղվածությամբ միջոցառումների կազմակերպում և իրականացում,
- աշակերտների հետ մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ նրանցից լավագույններին ընտրելու և ռազմական հաստատություններում կրթությունը շարունակել ուղղորդելու նպատակով,
- նախազորակոչային հարցերը կազմակերպելը, նախազորակոչիկներին պարտադիր զինվորական ծառայությանը նախապատրաստելը, ուղղորդելը և այլն,
- ուսուցանվողների անվտանգային հարցերի կազմակերպումը և այլն : Զինղեկների կողմից իրականացվող ռազմահայրենասիրական դաստիարակության մյուս ուղղվածությունը ռազմա-տեխնիկական պատրաստվածությունն է, որի ընթացքում աշակերտների մոտ ձևավորվում են զինվորական որակներ, որոնց թվին են դասվում.
- զինվորական գիտելիքները,
- ռազմական վարպետությունը,
- կարգապահությունը և կազմակերպվածությունը,
- ռազմական ընկերակցությունը,

- զինվորական կանոնադրությանը, ղեկավարության և հրամանատարների հրամանների անվերապահ իրականացումը:

Մյուս ոչ պակաս կարևոր ուղղվածությունը, որն իրականացնում է զինղեկը իր մասնագիտական գործունեության ընթացքում, երիտասարդների ֆիզիկական զարգացումն է: Սրանով նա նպատակ ունի աշակերտների մոտ ձևավորել ֆիզիկական տոկունություն, ահռելի ֆիզիկական ծանրաբեռնվածություն կրելու կարողություն ինչպես զինվորական ծառայության, այնպես էլ պատերազմական իրավիճակում: Հանրակրթական դպրոցներում ՆԶՊ առարկան դասավանդելու գործում կարևորվում է այն հանգամանքը, որ մարտական իրադրությունը, արտակարգ իրավիճակները խորը սթրեսի առաջացման պատճառ կարող են հանդիսանալ, որի ժամանակ մեծապես արգելակվում են մարդու զգայական, մտածական մեխանիզմները, և գործում են միայն անձի հմտություններն ու կարողությունները : Հմտություններ ասելով հասկանում ենք վարժանքների շնորհիվ մինչև ավտոմատիզմի հասցված մարդու գործնական կարողությունները, որոնք նա իրականացնում է ինքնաբերաբար՝ ուշադրությունը կենտրոնացնելով միայն արագ փոփոխվող իրավիճակի վրա և արձագանքելով դրան: Օրինակ, հրաձգության ժամանակ զինվորը չպետք է մտածի շնչառությունը կանոնավորելու, զենքը ճիշտ պահելու, աչքի ֆոկուսը կանոնավորելու, ձգանը քաշելու տեխնիկայի վրա՝ դրանք իրականացնելով մեխանիկորեն, իսկ ուշադրությունը կենտրոնացնում է միայն թիրախի ընտրության վրա: Նույնը՝ հառակորդի կրակոցին, արկի պայթյունին արձագանքելու կամ զենքի կիրառման անվտանգության կանոնները պահպանելու, պատահական կրակոցներից խուսափելու հետ կապված: Զինղեկի մասնագիտական գործունեության հիմնական կարևոր կետերից մեկն էլ երիտասարդների մոտ վերոնշյալ հմտությունների զարգացումն ու ամրապնդումն է՝ տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Հմտորեն մշակված շարժումները՝ արագ կամ քողարկված տեղաշարժը արդյունավետ են դարձնում զինվորի գործողությունները և շատ դեպքերում ապահովում նրա անվտանգությունը:

Ֆիզիկական կարողությունների (հավասարակշռության պահպանում, շարժումների կոորդինացիա, ճկնություն, ճարպկություն, ուժ, դիմացկունութուն) և հմտությունների ձևավորումը սովորաբար իրականացվում է ֆիզիկական կուլտուրա առարկայի դասընթացում, իսկ ՆԶՊ-ի դասընթացում իրականացվում են զինվորի համար նախատեսված վարժաձևերի կատարման կարողություններն ու հմտությունները: Նախնական զինվորական պատրաստվածությունը ենթադրում է նաև ուսուցանվողներին հոգեբանական պատրաստության հիմունքների դասավանդում, որը գիտելիքներ է տալիս անձի հոգեկան գործընթացների, հոգեկան վիճակների և առանձնահատկությունների, մի շարք հոգեբանական խնդիրների վերաբերյալ՝ սրանով իսկ նպաստելով նրանց հոգեբանական պատրաստությանը: Այստեղ պետք է հաշվի առնել, որ անձի հոգեբանական կայունության կարևոր գործոն են ինչպես նրա անձնային-հոգեբանական առանձնահատկությունները, այնպես էլ սպառազինության տեսակներին, մարտավարական հնարքներին տիրապետման գիտակցումը և մարտականին մոտ փորձը, այսինքն գործնական հմտությունների և կարողությունների զարգացվածությունը: Ստացվում, է, որ զինղեկը, բացի նեղ զինվորական մասնագիտությունից, տիրապետում է նաև հոգեբանության, ֆիզիկական կուլտուրայի հիմունքներն: Սրանով իսկ ակնհայտ է ՆԶՊ առարկայի և հարակից ոլորտի մասնագիտությունների միջառարկայական անքակտելի կապը: ՆԶՊ առարկայի ուսուցչի՝ զինղեկի մանկավարժական վարպետությունը սահմանվում է ոչ միայն իր առարկայի վերաբերյալ մասնագիտական գիտելիքների իմացությամբ, այլև ուսուցման արդյունավետ մեթոդների, եղանակների և միջոցների ազատ և ինքնավստահ տիրապետմամբ: Ուսուցման մեթոդներ ասելով հասկանում ենք զինղեկների և աշակերտների, ինչպես նաև զինղեկների և շեֆ-զորամասի սպայական անձնակազմի միջև համատեղ աշխատանքի ուղիներն ու եղանակները: Ուսուցման մեթոդները կրթության ընդհանուր նպատակներն ու խնդիրներն են: Յուրաքանչյուր մեթոդ բաղկացած է կրթության փոխկապակցված եղանակներից :

ՆԶՊ առարկան հանրակրթական դպրոցում դասավանդվում է հետևյալ նպատակներով.

• նպաստում է պաշտպանության ոլորտում ընդհանուր և նախնական գիտելիքների յուրացմանը,

• նպաստում է ուսումնական հաստատություններում զինվորական ծառայության հմտությունների յուրացմանը,

• նպաստում է ռազմահայրենասիրական դաստիարակությանը,

• նպաստում է արտակարգ իրավիճակներում քաղպաշտպանության վերաբերյալ գիտելիքների և կարողությունների զարգացմանը: Այս ամենը, ընդհանուր առմամբ ուղղված է պետության պաշտպանությանը ինչպես դրսում՝ երկրի սահմաններին, այնպես էլ ներսում անհատական քաղաքացիների մակարդակով: Պետական կրթական ստանդարտները ենթադրում են ուսումնական հաստատություններում պետության պաշտպանության վերաբերյալ երեխաների ռազմական պարտականությունների, ինչպես նաև ուսուցանվողների կողմից ռազմական գործի ոլորտում նախնական գիտելիքների յուրացում: ՆԶՊ առարկայի դասավանդման շրջանակներում զինղեկները իրականացնում են հետևյալ մասնագիտական գործառույթները.

• ուսումնադաստիարակչական,

• գիտամեթոդական,

• կազմակերպա-կառավարչական,

• կրթական:

Զինղեկները, որպես ուսումնական գործունեության ակտիվ մասնակից, իրենց կարևոր դերն ունեն ապագա զինվորի աշխարհայացքում բանակի և զինվորական կյանքի վերաբերյալ պատկերացումների ձևավորման գործում: Այստեղ մեծ է զինղեկի ոչ միայն անձնային որակների դերը, այլև մասնագիտական գիտելիքների, հմտությունների և կարողությունների զարգացվածությունը: Ամփոփելով անհրաժեշտ է նշել, որ ՆԶՊ առարկայի ուսուցումը և զինղեկի

մասնագիտական գործունեությունը պետք է ուղղված լինի հատուկ վարժանքների ձևով աշակերտների բարոյահոգեբանական հատկանիշների ձևավորմանն ու ուժեղացմանը (հայրենասիրության, կարգապահության, պատասխանատվության, ինքնավստահության, կոլեկտիվիզմի), որոշակի ունակությունների զարգացմանը և նոր կարողությունների ստեղծմանը (ֆիզիկական ընդունակությունների, ֆիզիոլոգիական հատկանիշների, հիշողության, ուշադրության կենտրոնացման ու փոխատեղման, վերլուծական մտածողության):

1.2 Շեֆ-զորամասի հետ զինղեկների համագործակցության առանձնահատկությունները

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի իրականացումը պայմանավորված է ինչպես ռազմագիտության ոլորտում վերջին տասնամյակում տեղի ունեցած փոփոխություններով և իրավիճակային զարգացումներով, այնպես էլ ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման ձևով՝ օգտագործելով ուսուցման պարուրաձև և վեկտորային մոտեցումները, շարժվելով անհատական պատրաստվածությունից խմբային (ջոկային) պատրաստվածության: Այստեղ առաջնային է ուսուցումը գործնական հիմքերի վրա դնելը, մարտական իրադրությունում և արտակարգ այլ իրավիճակներում անհրաժեշտ հմտությունների և կարողությունների ձեռքբերումը, աստիճանաբար հիմքային որակների ձևավորումից գործնական վարժանքներում դրանց կիրառումը: Կարևորվում է նաև միջառարկայական կապերի զարգացումը և ուսուցողական նյութերի պարզեցումը, ոչ պրոֆիլային թեմաներից ազատումը և արդիական ու կարևոր թեմաների ներմուծումը, ավելի արդյունավետ մեթոդական մոտեցումների, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների կիրառումը :

Հաշվի առնելով արդի ժամանակներում միջազգային և տարածաշրջանային զարգացումները և, դրա հետ կապված, այս առարկայի կարևորությունը, ինչպես նաև ստացած գիտելիքների՝ զինծառայության ընթացքում գործնական կիրառման հնարավորությունը՝ անհրաժեշտ է ուսուցման գործընթացի արդյունավետ համակարգի կիրառում ինչպես մեթոդաբանության, այնպես էլ ժամանակակից տեխնոլոգիաների (ուսուցողական նյութի դիտարժան ներկայացման տեխնիկական ու ծրագրային միջոցների) կիրառման տեսանկյունից: Օրինակ, կարող են կիրառվել ինչպես հարցադրումների միջոցով խնդիրների ներկայացումը, սովորողների մտածողության ակտիվացումը, նրանց մոտ հետաքրքրության առաջացումը կոնկրետ թեմայի և առարկայի վերաբերյալ, այնպես էլ սովորողների առանձին

խմբերի միջև մրցակցության նախաձեռնումը, գիտելիքների ընկալման, յուրացման և ունակությունների դրսևորման ներքին շարժառիթների ստեղծումը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում գործնական վարժանքներին, քանի որ մարտական իրավիճակում շատ կարևոր է զինվորի գործողությունների հղկումը՝ մինչև դրանց ինքնաբերաբար իրականացումը: Զինղեկների մասնագիտական ուղղվածության զարգացման վերաբերյալ հետազոտությունները կրթական ոլորտի մասնագետների շրջանում կարևորագույն թեմաներից մեկն է: Մեր հետազոտության նպատակն է ուսումնասիրել զինղեկների մասնագիտական գործունեության սկզբունքները, նպատակները, զարգացման մեթոդները: Ժամանակակից ռազմական գիտության զարգացմանը զուգընթաց մեծանում են ռազմական գործի մասնագետներին տրվող պահանջները ինչպես ԶՈՒ կազմում ընդգրկված սպաների, այնպես էլ դպրոցներում՝ զինղեկների համար: Արցախյան վերջին պատերազմի փորձը ցույց տվեց, որ ռազմական գործողություններում գերակշռում են ժամանակակից, տեխնոլոգիապես հագեցված զինատեսակները, ինչը վկայում է ռազմական գործի՝ ժամանակի իննովացիոն տեխնոլոգիաներին համընթաց զարգացման մասին: Ռազմական հմտությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները զինղեկների մասնագիտական գործունեության կարևորագույն բաղադրիչներից են: Զինվորական գիտելիքների ամրապնդման և կատարելագործման նպատակով զինղեկները համագործակցում են զեֆ-զորամասի անձնակազմի հետ, որի արդյունքում ստանում են մեթոդական պատրաստվածություն, ինչն էլ հնարավորություն է տալիս վերջիններիս ունենալ որոշակի ռեսուրսներ, որոնք թույլ կտան նրանց ադապտացվել փոփոխվող ռազմական իրականությանը, դրանով իսկ արդյունավետորեն փոփոխել ուսումնամանկավարժական գործունեության ընթացքը: Հաշվի առնելով ժամանակակից ռազմական գիտության զարգացման միտումները՝ ակնհայտ է որ զինղեկների մասնագիտական համագործակցությունը շեֆ-զորամասերի հետ պետք է կրի ինչպես կառուցվածքային-բովանդակային, այնպես էլ տեխնոլոգիական

բնույթ: Ինչպես գիտենք, շեֆ-զորամասի հետ զինղեկների մասնագիտական համագործակցությունը ենթադրում է տեսական, և առավել շատ գործնական մասեր: Այս համագործակցությունը ուղղված է առաջին հերթին զինղեկներին՝ ռազմական գործի առաջընթացներից և փոփոխություններից անմասն չպահելուն, ինչն էլ շղթայակցված կերպով փոխանցվում է դպրոցներում ուսուցանվող ապագա զինվորներին: Այս գործակցությունը նրանց ընձեռում է նոր գիտելիքներ տեսական և գործնական ոլորտներում: Ընդհանուր առմամբ, այս ամենը ունի մեկ գերնպատակ՝ նպաստել զինղեկների մասնագիտական կոմպետենտության բարձրացմանը, դրանով իսկ բարձրացնել աշակերտների շրջանում ռազմագիտության վերաբերյալ գործնական գիտելիքները: Զինղեկի մասնագիտական կոմպետենտությունը ենթադրում է նրա մասնագիտական գիտելիքների, գործնական հմտությունների ընդլայնում, պատրաստվածության մակարդակի բարձրացում, որը թույլ է տալիս կառուցողական գործել փոփոխվող սոցիալական և մասնագիտական պայմաններում:

Ինչպես յուրաքանչյուր ուսուցիչ, այնպես էլ զինղեկները ժամանակ առ ժամանակ մասնագիտական վերապատրաստման կարիք են զգում: Այդ վերապատրաստումները իրականավում են հստակ մշակված պլանի և ժամանակացույցի համապատասխան:

Շեֆ-զորամասի հետ համագործակցությունը արդյունավետորեն է ազդում ոչ միայն զինղեկների մասնագիտական աճի, այնպես էլ աշակերտների ուսումնական գործունեության վրա: Երեխաները, ժամանակ առ ժամանակ հաճախելով զորամաս, իրականացնում են գործնական պարապմունքներ մարտական պատրաստության վերաբերյալ՝ զենքի տեսակների, դրանք քանդելու, հավաքելու գործողությունների տիրապետման, ճիշտ նշանառության կանոնների և վարժասարքերի վրա ավտոմատով կրակային վարժանքներ իրականացնելու, ինչպես նաև առաջին բուժօգնության, քաղաքացիական պաշտպանության պարագաների ուսումնասիրման վերաբերյալ գործնական պարապմունքներ: Այն հնարավորություն

է տալիս սովորողներին անմիջականորեն ծանոթանալ բանակային առօրյային, մարտական տեխնիկային, սպառազինության տեսակներին և անձնակազմի մարտական պարապմունքներին:

Դպրոցին կցված շեֆ-զորամասի հետ համագործակցության արդյունքում խորանում են դպրոց-զորամաս գործնական կապերը, որոնք ուղղված են ՆԶՊ ոլորտում աշակերտների գիտելիքների և զինղեկների մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Սակայն վերջին տարիներին(2019թ-ից) կապված “Covid 19” համարաճարակի հետ, որոշ դեպքերում (2020թ) պատերազմից հետո դպրոց-զորամաս շեֆական կապը վատացավ (որոշ դեպքերում կտրվեց): Կա նաև մի հանգամանք, որ ազդում է դպրոց զորամաս շեֆական արդյունավետ կապերի վրա: ԳՇ պետի հրամանով կցում են դպրոցները զորամասներին, համարվում է զորամաս նաև զինկոմիսարիատները, հաշվի չի առնվում՝ ավագ դպրոց 20-22 դասարաններով, թե հիմնական դպրոցը 3-4 դասարաններով (հրամանի մեջ) հրամանատարները դպրոցների համարներն ունեն, չես կարող փոփոխել (ԳՇ պետի հրամ-ը 2տարին մեկ է հաստատում): Իմ ավագ դպրոցը կցված է եղել Արաբկիրի(2) զինկոմիսարիատին(2018-2019թթ.) կայացվում է այնպես, որ այս կապի դպրոց-զորամաս(հասարակության-բանակ) հիմնական լոկոմոծիվը զինղեկն է: Ուրիշ ոչ ոքու չի հետաքրքրում:

Մեծ նշանակություն ունի նաև թեմատիկ ծրագրի համաձայն գործնական պարապմունքների կազմակերպումը հրաձգությունից: Այս աշխատանքը ԿԳՍ և ՊՆ նախարարների պահանջների համաձայն պետք է իրականացնեն զինկոմիսարիատները: Այս աշխատանքը ևս բացթողի վիճակում է գտնվում (տարբեր պատճառներով): Վերջին 4-տարիների ընթացքում զինկոմիսարիատները պահանջում են, որ աղջիկ աշակերտուհիները չմասնակցեն հրաձգության գործնական տարեվերջյան պարապմունքներին, ինչ՞ու: Այսօր (2023թ Քանաքեռում) ՊՆ-ի ջանքերով կազմակերպվում է կանանց գումարտակ, պայմանագրային հիմունքներով:

Մեծ նշանակություն ունի նաև կապը՝ դպրոց ռազմա-ուսումնական հաստատություններ: Այստեղ կապը չպետք է լինի էլի մի կողմանի (զինղեկի միջոցով): ՌՈՒՀ-ը պետք է պարզեցնեն ընդունդելության գործընթացը (ֆիզիկա, մաթեմատիկա-միասնական) ոստիկանական ակադեմիայում այդ խնդիրները չկան: Շատ լավ տղան կամ աղջիկը, ֆիզիկապես ուժեղ, հոգեպես առողջ, հայրենասեր, չի կարողանում սովորել, քանի որ վերը նշված առարկաներից ուժեղ չէ:

Պետք է վերանայվի այս խնդիրը:Այս ոլորտում հանդիպումները փոխադարձ այցելությունները անհրաժեշտ են մասնագիտական ընտրության համար:

ՀՀ Պաշտպանության նախարարությունը, անկասկած, անում է ամեն հնարավոր բան ռազմական կառուցվածքավորումներում խնդիրների լուծման համար, զինվորական կարգուկանոնի և կազմակերպվածության, ինչպես նաև դպրոցբանակ փոխադարձ կապի ամրապնդման համար:

ՆԶՊ և ԱԿ առարկայի դասարանը պետք է հագեցած լինի <<Smart>> էկրաններով, պրոէկրտով և համակարգչով: Դասին առնչվող թեման էկրանի վրա ցուցադրելով ներկայացնու աշակերտներին, ընկալումը հետաքրքրությունը կլնինի ավելի բարձր: (Կարող ենք ցուցադրել բոլոր թեմաներից): Դա պետք է լինի և ավագ դպրոցներում և հիմնական դպրոցներում: Հաշվի առնելով արդի ժամանակներում միջազգային և տարածաշրջանային զարգացումները և, դրա հետ կապված, այս առարկայի կարևորությունը, ինչպես նաև ստացած գիտելիքների՝ զինծառայության ընթացքում գործնական կիրառման հնարավորությունը՝ անհրաժեշտ է ուսուցման գործընթացի արդյունավետ համակարգի կիրառում ինչպես մեթոդաբանության, այնպես էլ ժամանակակից տեխնոլոգիաների (ուսուցողական նյութի դիտարժան ներկայացման տեխնիկական ու ծրագրային միջոցների) կիրառման տեսանկյունից: Բոլոր ավագ դպրոցներին պետք է տրամադրվեն ժամանակակից “Մենամարտ” համակարգ: Էկրանի վրա ավտոմատով կրակելը նույնն է, այնպես ինչպես զորամասերում իրականացնում են հրաձգարաններում գործնական կրակային վարժանքների ժամանակ:

Համակարգչում թիրախային համակարգը նույնն է ինչ կիրառվում են ԶՈՒ: Ես եղել եմ գնդի հրամանատար, եղել եմ բրիգադայի հրամանատար և շատ լավ դա գիտեմ:

Այսինքն մենք աշակերտին, ապագա զինվորին կարող ենք դպրոցում սովորացնել ճիշտ նշան բռնելը, տրված նշանակետերի համար փամփուշտները չգերազանցելը: Օրինակ՝ երկրորդ ստուգողական վարժությունը կրակելու ժամանակ բարձրանում է երկու թիրախ"վազող զինվոր", և "գնդացրորդ", կրակողը առաջնահերդությունը պետք է տա գնդացրորդին, նրան ոչնչացնի, որը ավելի վտանգավոր է, հետո խոցի միուս նշանակետը: Այս հարցերի իմացությունը ոչ մի անգամ չի մոռացվում:

Այս ամենը հնարավորություն կտա սովորողների մտածողության ակտիվացմանը նրանց մոտ հետաքրքրություն կառաջացնի կոնկրետ թեմայի և առարկայի վերաբերյալ, այնպես և սովորողների առանձին խմբերի միջև մրցակցության նախաձեռնումը գիտելիքների ընկալման, յուրացման և ունակությունների դրսեվորման ներքին շարժառիթների ստեղծումը:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում գործնական վարժանքներին, քանի որ մարտական իրավիճակում շատ կարևոր է զինվորի գործողությունների հղկումը՝ մինչև դրանց ինքնաբերաբար իրականացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով ՆԶՊ առարկայի դասավանդման ընդհանուր դրույթները և այն դասավանդող զինղեկների մասնագիտական գործունեության առանձնահատկությունները, կարող եմ եզրակացնել, որ.

1. նախնական զինվորական պատրաստության և զինղեկների մասնագիտական գործունեության հիմնական նպատակը նախազորակոչային տարիքի պատանիներին զինվորական ծառայության, պատրաստելն է, որի շրջանակներում կարևորվում է նախնական զինվորական պատրաստության դասավանդման նշանակությունը, ինչպես նաև զինղեկի մասնագիտական կոմպետենտությունը,

2. ՆԶՊ շրջանակներում դպրոցականների համար պարզաբանվում է զինված ուժերի խնդիրները, առանձնահատկություններն ու նշանակությունը,

3. դասավանդման ընթացքում աշակերտները ծանոթանում են հայոց բանակի պատմական ավանդույթներին, զորամասերի մարտական ուղուն, առօրյային, կենցաղին, զենքին և ռազմական տեխնիկային, զինվորական երդմանն ու այլ արարողակարգերին, համազորային կանոնադրությունների դրույթներին, արմատավորվում է հայ ժողովրդի պատմության, մշակույթի, ավանդույթների նկատմամբ հարգալից վերաբերմունք,

4. երիտասարդ սերնդի մոտ ձեևավորվում է հայրենիքին անձնվիրաբար ծառայելու, զինվորական պարտքն անմնացորդ նվիրումով կատարելու գիտակցությունը,

5. իրականցվում է պաշտպանական բնույթի ռազմատեխնիկական կազմակերպություններում ուսանելու նպատակով աշակերտների մասնագիտական կողմնորոշման աշխատանք՝ ըստ նախասիրությունների;

6. դաստիարակվում են ֆիզիկապես և բարոյապես առողջ, բազմակողմանի զարգացած երիտասարդներ;

7. զինղեկների մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման միջոցառումները ոլորտի կարևորագույն խնդիրներից է. այդ նպատակով զինղեկները հագործակցում են զեֆ-զորամասերի անձնակազմերի հետ,

8. շեֆ-զորամասի անձնակազմի հետ զինղեկների փոխգործակցության արդյունքում մերջիննես ստանում են մեթոդական պատրաստվածություն, որոշակի ռեսուրսներ, ինչը նոր հնարավորություններ է ստեղծում ավելի 14 արդյունավետ ադապտացվել փոփոխվող ռազմական-մասնագիտական իրականությանը:

Իրականացված հետազոտության հիան վրա ներկայացվում է հետևյալ *առաջարկությունները*:

1. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասընթացները ավելի կիրառական ու նպատակային (մասնավորապես մասնագիտական գիտելիքների և հմտությունների ձեռքբերման տեսանկյունից) դարձնելու համար դրանք պետք է այնպես կազմակերպել, որ աշակերտներն ավելի հաճախ այցելեն շեֆ-զորամասեր, այդ թվում՝ սահմանամերձ, պատմամշակութային կարևոր հուշարձաններ, իմանան պարտադիր ժամկետային ծառայություն անցնող հերոս զինվորների՝ իրենց պես պատանիների և երիտասարդների սխրագործությունների մասին: Կարևորում եմ նաև նմանատիպ փոխայցելությունները, հայրենասիրական տարբեր միջոցառումների անցկացումը զինվորականների, վետերանների մասնակցությամբ: Դրանով ավելի է ամրապնդվում բանակ-հասարակություն կապը:

2. Մյուս կարևոր առաջարկությունը կապված է այն հանգամանքի հետ, որ հաճախ հանրակրթական դպրոցն ավարտելուց հետո պատանիները նախքան զորակոչվելը մոռանում են ՆԶՊ դասերի ժամանակ ստացած գիտելիքների և հմտությունների զգալի մասը: Այս առումով, կարելի է գործնական պարապմունքների և վարժանքների հաճախականությունը ավելացնել, ինչը կնպաստի ստացած հմտությունների առավել ամրապնդմանը:

3. «Նախնական զինվորական պատրաստության» ժամերը առավել հետաքրքիր ու գործնական դարձնելու համար պետք է անընդհատ կազմակերպել էքսկուրսիաներ

դեպի զորամասեր, աշակերտներին ծանոթացնել բանակի առօրյային, ժամանակ առ ժամանակ նրանց անմասն չպահել զինվորական կյանքից ու անցուդարձից:

4. Զինղեկների մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում եմ ավելի հաճախակի դարձնել շեֆզորամասերի անձնակազմի հետ նրանց հանդիպումները, սեմինարքննարկումներն ու գործնական վարժանքները:

5. ՆԶՊ և ԱԿԱ առարկայի դասարանները պետք է հագեցնել ժամանակակից տեխնիկական միջոցներով, տրամադրել նյութական բազա(փամփուշտներ, նռնակներ, ականներ(ուսումնական)) կտրվածքով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Каменев А.И. История подготовки офицерских кадров в СССР. ВПА. -М., 1991.- 261 с.

2. Короткое Э.Н. Педагогические основы развития интеллектуальных качеств офицеров: Дис. . канд. пед. наук. -М., 1973. 226 с.

3. Коупленд Н. Психология и солдат / Пер. с англ. М., 1991. - 96 с.

4. Максимова В.Н. Сущность и функции межпредметных связей в целостном процессе обучения: Автореф. дис. . доктора пед. наук. Л., 1981.-46 с.

5. Шагимуллин Р.Х. Интеграция учебной и военно-профессиональной деятельности при подготовке курсантов высших военно-учебных заведений. Казань, 2000. - 208 с.

6. Янковский С.К. Дидактика подготовительного обучения стрельбе. -Вильна, 1914.- 232 с.

7. https://escs.am/files/files/2021-05-06/114a72e4ebca1a68bcd63c2e091ccc9f.pdf ՆԶՊ առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր, (8-12-րդդասարաններ):

8. http://www.hayzinvor.am/33565.html «Հայ զինվոր» պաշտոնական կայք:

9. http://ijevan.ysu.am/wp-content/uploads/2015/05/Joxovacu-Text-354.pdf Ն. Դավթյան, «Սովորողների հայրենասիրական դաստիարակության իրականացման ուղիները», Վանաձոր, 2015:

10.https://arar.sci.am/dlibra/publication/183715/edition/166940/contentԳ. Խաչատրյան, «Հասարակության հայրենասիրական դաստիարակության գաղափարական հիմքերը Հայաստանում», էջ 235: